



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 դեկտեմբերի 2020 թվականի N 1927-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
(ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի
և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656
որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավա-
րությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հողային ֆոնդի
առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը)՝ 2020
թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության էկոնո-
միկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին
և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության ջրային կոմիտեի նախագահին՝ իրենց կողմից կատարվող աշխատանք-
ների արդյունքում հողային ֆոնդի կազմում կատարվող փոփոխությունները (բազմամյա

տնկարկների հիմնում, նոր հողերի իրացում, ռոտզվող հողերի նոր ելքեր, անտառների հիմնում և այլ փոփոխություններ) ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարզպետներին, համապատասխան համայնքների ղեկավարներին և Կադաստրի կոմիտե՝ հողերի ընթացիկ հաշվառումն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ անտառշինական ծրագրերի իրականացման ժամանակ հայտնաբերված հողային ֆոնդի բաշխման անճշտությունները, անտառային հողերի, ինչպես նաև ազգային պարկերի, արգելոցների, արգելավայրերի սահմաններն ու տարածքները կառավարման պլաններին համապատասխան ճշգրտելուց հետո՝ համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության մարզպետների, համայնքների ղեկավարների հետ և ներկայացնել Կադաստրի կոմիտե՝ ընթացիկ հողային հաշվեկշռում ընդգրկելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1927-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
(ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ)

		Տարածքը (հազար հեկտար)	որից ոռոգվող
	Հայաստանի Հանրապետության տարածքը	2974.26	208.89
	այդ թվում՝		
1.	Հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության		
1)	գյուղատնտեսական նշանակության հողեր	2043.51	155.39
	որից՝		
ա.	վարելահողեր	444.00	117.45
բ.	բազմամյա տնկարկներ	37.34	36.44
գ.	խոտհարքներ	121.11	1.50
դ.	արոտավայրեր	1050.54	
ե.	այլ հողատեսքեր	390.52	
2)	բնակավայրերի հողեր	151.94	53.10
	որից՝		
ա.	տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողեր	94.61	52.96
3)	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	38.64	
4)	էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	13.56	
5)	հատուկ պահպանվող տարածքների հողեր	335.64	
6)	հատուկ նշանակության հողեր	30.51	
7)	անտառային հողեր	334.02	0.4
8)	ջրային հողեր	25.82	
9)	պահուստային հողեր	0.62	
2.	Հողային ֆոնդն ըստ սեփականության սուբյեկտների		
1)	քաղաքացիների	538.86	180.42
2)	իրավաբանական անձանց	37.32	5.75
3)	համայնքային	1024.19	20.94
4)	պետական	1373.23	1.62
5)	օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների	0.66	0.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ